

ԱՂԹԱՄԱՐ

Առանձնակի տեղ կուտայ Աղթամարին Լիդիա Դուրնովուն: Ան ևս կը բաժնէ ընդհանրացած կարծիքը համակարգի վաղ քրիստոնէական նիւթերու կրկնութեան և տեղական, առարկայական, երկրորդական նշանակութեան մասին: Իրաւացի է ան, երբ կը նշէ որթագաւարի գոտիին մէջ աշխարհիկ նիւթերու գերակայութիւնը, սակայն հիմնովին կը սխալի, երբ գլխաւոր գոտիէն վեր տեղաւորուած զօրաւոր ելուստ ունեցող քանդակաշարը կը սեպէ խորթ տաճարի պատկերազրական համակարգի բերուած, ճշմարտութեան ամբողջ, որուն քարերը Գագիկ Աթոռունին օգտագործած էր տաճարը կառուցելու համար: Աղթամարի բարձրաքանդակներուն անգրադարձած են շատ հետազոտողներ, և չենք կրնար նշել ոչ մէկ հայկական միջնադարեան կոթողական արուեստի նուիրուած աշխատութիւն, որտեղ այս կամ այն առիթով խօսուած չըլլար Աղթամարի պատկերազրական արուեստի մասին: Աղթամարի տաճարը և յատկապէս անոր պատկերաքանդակները տեղ գտած են նաև արտասահմանեան շարք մը հետազոտողներու գործերուն մէջ: Սակայն, բացի

Սիրարփի Տէր Ներսէսեանի գործերէն, խիստ դժուար է գտնել թէկուզ մէկ հետազոտութիւն, ուր հայկական արուեստի այս հոյակերտ կոթողը ստանար իր արժանի գնահատականը և հանդէս գար որպէս հայկական մշակոյթի անբաժանելի մէկ մասը: «Սկզբնաղբիւրներու» որոնումները հեղինակներուն կը տանին հին Ասորեստան և Եգիպտոս, կեդրոնական Ասիա և Պարսկաստան, մինչև իսկ Իսլամական և Թրքական արուեստին, չըսելու համար որ շատերը զայն կը սեպեն Բիւզանդական արուեստի արեւելեան դպրոցի մը արտայայտութիւնը:

Այս ընդհանուր հոսանքէն կը բաժնուի Մ. Դպիրօղլուի աշխատութիւնը, թէև այստեղ ևս ամէն ինչ կայ, բացի հայկական արուեստի հնաւանդ նախադրեալներէն: Ատոր հետ միասին հեղինակը կը փորձէ բացատրել Աղթամարի պատկերաքանդակներու տեղաբաշխումը լուսաստուկերային փոփոխութիւններով, կապուած արեւի շարժման և վերջինիս բարձրութեան հետ: Հեղինակը կը նշէ բարձրաքանդակներու կատարման մեծ վարպետութիւնը, իսկ կառուցուածքը

Արամազդեան պատգամը սպասող ժողովուրդին: «Զինուած ձիւորներ» շարքի, իսկ ժողովուրդը, ճերմակ դրօշակ պարգած, թող վերադառնան իրենց տեղերը և յանձնուին: Ահաւոր փոթորիկ մը ծայր տուաւ: Ժողովուրդի մեծ մասը, չուզելով քսմունի իր սիրելիներէն, որոնց գոյութեան համար էր որ տարիներով Ոստանի և Անիսի ձիւնածածկ խրամներու մէջ կուրծք տուած էին թշնամիի զնդակներուն, կը բռնէր Լիմ անապատի ճանապարհը, յանձնելով ինքզինքը ճակատագրի անօրինութեան:

Չարագուշակ չէնք պատին տակ կանգնողներէն մին ալ հայրս էր: Երբ վերագարձաւ փրփուր կար իր շրթներուն և

բերանը լեցուն էր հայհոյանքներով: Հայրս և մայրս համաձայնեցան Լիմ կղզին գացողներուն ընկերանալ: Երբ մօտեցանք ծովուն, նաևկը արդէն ծանրաբեռնուած էր մեկնողներով և պիտի վերադառնար նորեր տանելու: Ես երբ տեղեկ եղայ հօրս և մօրս կղզին երթալու մտադրութեան, յանկարծ տարօրինակ զգացումով լեցուեցայ և գետին պառկելով մերժեցի նաևակով կղզին երթալ: Հայրս և մայրս պահ մը մնացին զարմացած, յետոյ մայրս ըսաւ. «Դուցէ Աստուծոյ ազգարարութիւնն է որ կը տրուի մեզի այս անմեղի միջոցաւ»: Եւ երբ նաևակը վերադարձաւ նորեր տանելու, մենք արդէն հեռացած էինք ծովկղզին:

ընդհանրապես որպես ճարտարապետութեան և քանդակագործութեան հիմնադրման ուշագրաւ մէկ նմոյշը: Աղթամարի պատկերազրական համակարգին անդրադարձած ենք մենք, փորձելով բացայայտել պատկերազրական համակարգը: Սկզբունքային նորութիւնը հայ արուեստի պատմութեան միջև պայմանաւորուած էր այն պատժաքական իրադրութեամբ, որ ստեղծուած էր Հայաստանի և յատկապէս Վասպուրականի մէջ, Թ. - Ժ. դարերու սահմանադրված:

Սակայն, անոր հետ միասին, թէ՛ ընդհանուր համաշխարհային, թէ՛ առանձին նիւթերու և առարկաներու պատկերազրութեան հարցին, Մանուէլը և անոր հետ աշխատող միւս վարպետները հանդէս կու գան նախորդ դարերու ինչպէս հայ՝ այնպէս ալ Սասանեան արուեստի մէջ ընդհանրացած ձևերու հիմնային իմացութիւն: Աղթամարի մէջ իր ցայտուն արտայայտութիւնը կը գտնէ Թ. - Ժ. դարերու սահմանագծին հայ արուեստի մէջ կազմաւորուող ռեալիստիկ այն նոր ուղղութիւնը, որը կէս դար յետոյ արդէն ճարտարապետութեան քանդակներն պէտք է մարմնաւորէր Անիի բազմաթիւ հոյակերտ կառոյցներու մէջ: Համանման չեն մշակուած տաճարը շրջանցող զօտիները: Առաջին հիմնական զօտին մօտ երկու մէթր բարձրութեամբ հարթքանդակներու շարք մըն է, որ սկսելով արեւմտեան ճակատէն, կը շրջանցէ կառուցուածքի բոլոր ճակատները: Յաջորդը հնաւանդ խորհրդանիշերու զօտին է, որտեղ պատկերաքանդակները արտակարգ զօրաւոր ելուստ ունին և կը շրջանցեն տաճարը բոլոր կողմերէն: Աւելի վեր կ'ընթանայ որթատունկի զօտին, որտեղ խողովի որթաղաւարի շարժուն ձևերու մէջ պատկերացուած են ժողովուրդի կեանքէն ամենատարբեր տեսարաններ, թէ և հիմնականը այգիի մշակութիւնն է և բերքի պահպանումը յափշտակողներէն: Այլ աւելի վեր՝ խաչաթելերու և ճակատի պատերուն քիւերու երկայնքով կ'երկարի դիմաքանդակներու, զինանշաններու և սահմանաշաններու զօտին, իսկ աւելի վեր՝ թմբակի քիւին վրայ, կենդանավազի զօտին է,

որ կ'ամփոփէ ամբողջ պատկերազրական համակարգը:

Համակարգի համեմատական ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ այստեղ հիմնական միտումն էր փառաբանել Արծրունեաց իշխանական տունը, անոր նախնիքը և թագաւորական տան անդամները, ցոյց տալ անոնց աստուածասիրութիւնը և աւանդը քրիստոնէութեան տարածման, երկրի բարօրութեան և բարգաւաճման գործին մէջ: Այս, ըստ էութեան ոչխարհիկ թէզի մարմնաւորման համար Մանուէլը չունէր աւելի վեհ ու յստակ կերպարներ քան Ս. Դրային հանրայայտ նիւթերը: Անոնց հերոսներու մեծագործութիւններուն հետ բաղդատուելի կրնային միայն Արծրունիներու գործերը: Անոր հետ միասին գլխաւոր զօտին կոչուած էր մեծաբելու Արծրունեաց նախարարական տունը և Գագիկ թագաւորը: Խաղողի վազերու զօտին պէտք է խորհրդանշէր Վասպուրականի բարեօք կեանքը, իսկ իշխաններու զօտին՝ իշխանական տուներու համեմատութիւնը և միասնութիւնը: Մանուէլը կը քաղէր իր կերպարները հայրենի երկրի կենդանի աւանդոյթներէն, իշխանական տոհմային պատմութենէն և ժողովրդային բանահիւսութենէն:

Աշխարհիկ կեանքը և մտածողութիւնը իրենց խիստ որոշակի կնիքը դրած են համակարգի վրայ, որ ըստ էութեան աշխարհիկ հիմքի վրայ ստեղծուած պատժաքանդակային մեծ գործ է, իրականացուած քանդակի վառ և յստակ կերպարներու լեզուով:

Տաճարը անոր պատկերազրական համակարգը կը մարմնաւորէ զօրաւոր կեդրոնական իշխանութիւն ունենալու յառաջդիմական գաղափարը, ցոյց կու տայ Արծրունեաց իշխանական տան մեծագործութիւնները այդ ճանապարհին և այն երջանիկ ու խաղաղ կեանքին, որուն կը ձգտի ժողովուրդը: Պատահական չէ, որ աւատատիրական գաղափարախօսութիւնը արտայայտող կերպարներու կողքին վեր կը խոյանան ժողովուրդի ընդերքէն դուրս եկող հեթանոսական հաւատալիքներու արձագանգը հանդիսացող կերպարներ, որոնք առանձնակի շունչ և կենդանութիւն կը հաղորդեն ամբողջ համալիրին:

Պատկերագրական այս բարդ միջավայրի մէջ շատ հոսանքներ խաչաձևուած են, սակայն Մանուէլի ստեղծագործական որոնումներու ոլորտներու մէջ ամենահիմնականը, գլխաւորը միշտ ալ հայկական միջավայրն էր, հայրենի ժողովուրդի բախտը և անոր կենսա-փիլիսոփայութիւնը:

Պատկերագրական շարքերու սկզբը նաղբիւրները կ'երթան դարերու խորքը, դէպի իշխանական տուններու տոհմապատումները, դէպի ժողովրդական բանահիւսութիւնը: Սակայն ոճական միասնութեամբ դրսևորուած այդ գծերներուն մէջ իրենց հեռաւոր արձագանգները գտած են միայն հին արեւելեան և վաղ միջնադարեան հայկական քանդակի տարրերը, այլև այստեղ առկայ և արդէն նոր կազմաւորուող ոճական ուղղութեամբ բնորոշ շարք մը յատկանշական գիծեր, որոնք գերակշիռ կը դառնան յետագայ դարերուն:

Աղթամարի պատկերագրական համակարգը նոր, փայլուն էջ էր, եզակի երեւոյթ մը, որ ծագեցաւ, մշակուեցաւ ու զարգացաւ որոշակի պատմա-քաղաքական պայմաններու մէջ, և պատահական չէ որ այն անկրկնելի մնայ, այնպէս ինչպէս անկրկնելի էր անոր ստեղծող ժամանակը:

Վերը յիշուած է, թէ Աղթամարի տաճարը մէկ դարէ աւելի է որ կը կազմէ հետազօտողներու ուսումնասիրութեան գլխաւոր առարկան, և բազմաթիւ աշխատութիւններ հրատարակուած են անոր մասին: Սակայն փաստը կը մնայ փաստ, որ Արծրունեաց մայրաքաղաքը, անոր աշխարհիկ կառոյցները, միջնաբերդը և արհեստական նաւահանգիստը, որ ինքնին հայկական միջնադարեան կառուցողական մտքի փայլուն մէկ յուշարձանախումբը կը հանդիսանայ, պարզապէս դուրս մնացած էին ուսումնասիրութիւններու շրջանակներէն, և միայն Յ. Օրբէլիի աշխատութեան մէջ է, որ այդ կառոյցները իրենց որոշակի անդրադարձը գտած են: Մեր կարծիքով, Աղթամարի նուիրուած իւրաքանչիւր գործ պէտք է ընդգրկէ ամբողջ համալիրը, որովհետեւ թէ՛ պալատը, թէ՛ միւս կառոյցները եզակի երեւոյթ են ամբողջ միջնադարեան

հայկական ճարտարապետութեան համար ընդհանրապէս: Այդ սկզբունքէն ելլելով, մենք նախ և առաջ կ'անդրադառնանք քաղաքաշինական հարցերուն, աշխարհիկ կառոյցներուն, բուն տաճարի ճարտարապետութեան, և յետոյ միայն պատկերագրական համակարգին ու տաճարի որմանկարներուն:

ԱՂԹԱՄԱՐ ՔԱՂԱՔԸ

ԵՒ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ

Երկրին աւատապետական բաժանումները Թ.-ԺԱ. դարերուն մեծապէս նպաստեցին առանձին կեդրոններու կազմաւորման, որոնց շարքին էր Վասպուրականի մայրաքաղաք Աղթամարը: Արծրունեաց իշխաններու վաղեմի նպատակն էր ստեղծել իրենց առանձին թագաւորութիւնը և հասնիլ ամբողջ երկրին միութեան: Արծրունեաց գերիշխանութեան ներքեւ Երկրի ազատագրումը, պետականութեան վերականգնումը Բագրատունեաց կողմէ, քաղաքի զարգացումը և աշխարհիկ մտածողութեան ընդլայնումը էական հիմքեր էին այդ նպատակին ձգտելու: Իրենց հզօրութեամբ մրցելով Բագրատունիներու հետ, Արծրունեաց իշխանները փնտռէին խնայելու ճօնայիւր ճոխացնելու իրենց քաղաքները և առաջին հերթին՝ Աղթամարը:

Պէտք չէ մոռնալ որ Աղթամարի հիմնադրման ժամանակ չկային ո՛չ Անին, ոչ ալ երկրին քիչ թէ շատ նշանակալից կեդրոնները, իսկ Բագրատունի թագաւորները տեղէ տեղ կը փոխադրէին իրենց նստավայրերը: Հազիւ թէ կարելի ըլլայ կասկածիլ, որ Աղթամարը կը հիմնադրուէր որպէս տպագայ մայրաքաղաք, կոչուած ըլլալու ոչ միայն կեդրոն Վասպուրականի, այլև ամբողջ երկրին: Գտնուելով Վանայ լիճի համանուն կղզիին վրայ, այն յուսալիօրէն պաշտպանուած էր, իսկ արհեստական նաւահանգիստը կ'ապահովէր նաւերու անխափան գործունէութիւնը, նոյնիսկ փոթորկալայող օրերուն: Աղթամարը անմիջապէս չստեղծուեցաւ: Այդ կապակցութեամբ առաջնակարգ հետաքրքրութիւն կը ներկայացնէ Ոստան քաղաքը, որուն շինութիւնը նախորդած է Աղթամարին: Պահպանուած են պատմիչ-

ներս նկարագրութիւնները, Ոստան քաղաքի մնացորդները, որոնց զուգահեռ վերլուծութիւնը ակնյայտ կը դարձնէ որոշ ընդհանրութիւններ, որոնք առկա եղած են Ոստանի և Աղթամարի թէ՛ տեղաբաշխման, թէ՛ անոնց միջնորդող կազմաւորման քաղաքաշինական սկզբունքներու միջև: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Մանուէլը աշխատած է Ոստանի մէջ գեոէս միջին Աղթամարը, և ինք եղած է Արծրունեաց տան գլխաւոր ճարտարապետը գեոէս միջին մայրաքաղաքի հիմնադրումը: Ոստան քաղաքի պալատը համադամնօրէն կը նկարագրէ Անանուն Արծրունին, գրելով այդ մասին հետեւելը. «Ամբոցի գագաթը ծովահայեաց է և շատ վայելուչ: Երբ հողմերէն յուզուած՝ կ'ալեկոծի ծովը, անոր տաշկաձև ալիքները հաճելի և վայելուչ կ'երևին, իսկ երբ օդը յստակ կ'ըլլայ, բոլորին կը գրաւէ՝ իր ծաւալումը տեսնելու համար, որուն պատճառով թագաւորը կը ձեռնարկէ անոր մէջ կառուցել ապարանքներ, սենեակներ, փողոցներ՝ հրաշալի, պատկերաւոր և պէսպէս յօրինուածքով, ինչ որ չեմ կրնար նկարագրել: Պարիսպով շրջապատուած է նաև ծովի կողմէն զօրաւոր վէմերով, հիմքերը դնելով անհնարին խորութեան մէջ. իսկ պարիսպէն վեր և ծովին առջև կը շինէ ձեմադահլիճ մը, զարդարուած ոսկեզարդ և պէսպէս ներկերով, յոյժ լուսաւոր աշքերը շոյելու յուրախութիւն իր սրտի և իր արժանիներու: Կը կազմէ կամարաձև, օդարեր, զովացնող դռներ, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ծագման և մայրամուտի պահերուն փայլատակելով ծովուն վրայ, դահլիճի սրտին մէջ կը նետեն իրենց շողերը և պէսպէս գոյներով շրջնելով դրոշմուած պատկերներն ու յօրինուածքները, կ'ապշեցնեն դիտողներուն: Պալատական այս կառոյցի նկարագրութիւնը, կառոյց՝ որը անշուշտ կազմած է

Ոստանի միջնորդող կեդրոնը, այնքան մօտ է, այնքան շատ ընդհանրութիւններ ունի Աղթամարի պալատի նոյն պատմիչի կողմէն բերուած նկարագրութեան հետ, որ տարակոյս չի մնար անոնց կառուցողական ընդհանրութիւններու, երկու տեղերուն մէջ ալ միևնոյն ճարտարապետի գործունէութեան մասին:

Աղթամար կղզին, ոչ հեռու լիճի հարաւային ափէն, արտակարգօրէն յարմար էր պաշտպանութեան համար: Այդ կը վկայեն կղզիի հիւսիսային մասին մէջ պահպանուած կիկլոպեան պատերու մնացորդները, իսկ անմշակ ժայռաքիւղորէն կազմուած պատերը մնացած են նախարարական ժամանակներէն:

Վաղ միջնադարուն ևս Աղթամարը կը պահպանէր իր նշանակութիւնը որպէս երկրի նշանաւոր ամրութիւններէն մին: Պատահական չէ, որ Բիզանդական կայսրութեան դէմ մղուած պայքարի տարիներուն այստեղ ամրացած էր երկրի կառավարիչ Թէոդորոս Ռշտունին: Այս շրջանի կառույցներէն ոչ ինչ պահպանուած է, թէև կասկածի առիթ չի տար որ կղզիին ամրացուած ըլլալը գեոէս հին ժամանակ ևս խթան հանդիսացած է անոնց զօրացնելու և այդ տարածքի վրայ յուսուիօրէն պաշտպանուած քաղաք հիմնադրելու համար:

Ամրաշինութեան հարցով ափամերձ կղզիներու օգտագործումը քաջ յայտնի էր, ընդ որում այդ կը տեսնենք նոյն տարիներուն Սևանի մէջ, որտեղ համանուն կղզիին մէջ ամրացաւ երիտասարդ թագաւոր Աշոտ Երկաթը և այստեղէն սկսաւ իր յաղթարշաւը, ազատագրելու համար երկիրը Արաբներէն: Աւելի ուշ, նման առափնեայ ամրացներու կը հանդիպինք Կիլիկիոյ մէջ, ուր նաւահանգիստներու մատոյցները կը վերահսկէին ափէն ոչ հեռու կղզիներու վրայ գտնուող ամրացները (Կորիկոս):

ՍՏԵՓԱՆ ՄՆԱՏԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 2)

Արեւմտահայերէնի վերածեց՝

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԱՍՈՂԼԵԱՆ